

## Վեր. Համայնքապետի Արտակարգ Ժողովները Միացեալ Ազգերէն Ներս

Վեր. Համայնքապետը կատարեց ազգելութիւն Միացեալ Ազգերու գրասենեակներէն՝ Սուրիոյ եւ Հայաստանի դեսպաններուն՝ Դոկտ. Պաշար Ալ-Ճաաֆարիի եւ Տիար Կարէն Նազարեանի, 13 Փետրուար, 2013-ին, որոնց հետ քննարկեց Սուրիահայ ժողովուրդին տիրութիւն ընելու իրաւունքը, առանձնաշնորհում սեպելով, չինայել ոչ մէկ ջանք, ներկայացնելով համոզիչ բացատրողականներ եւ մեկնաբանութիւններ, լուսարձակելով հայ քրիստոնեայ ժողովուրդի կողմէ պատմութեան ընթացքին բերուած ու սակէ անդին բերելիք կրթամշակութային տնտեսական, առեւտրական եւ այլ բնագաւառներու մէջ խիստ օգտաշատ ներդրումը, ի պայծառութիւն միջին Արեւելեան երկիրներու ժողովուրդներուն: Միացեալ Ազգերու Ընդհանուր քարտուղարի գրասենեակի այն ենթաբաժանումը, որ ներկայիս կը գրադուի Սուրիական հարցերով, բարձր գնահատեց Վեր. Համայնքապետին կողմէ տրուած լուսաբանութիւնները: Սելիմեան պահանջեց, առաջին առիթով եւ անյապաղ դադրեցնել հրեշային արինահեղութիւնը, գործադրուած Սուրիացի քաղաքացիներու վրայ, որուն թիրախ դարձաւ Սուրիաբնակիչները առանց ազգային, կրօնի ու դաւանանքի խտրականութեան: Վեր. Յ. Սելիմեան դիտել տուաւ, թէ՛ ինչ որ կը պատահի Սուրիոյ մէջ համայն մարդկութեան դէմ գործադրուած ոճիր է, եւ այս ընթացքը կը տկարացնէ ժողովրդավարական սկզբունքներու յայտարարութիւնները, ինչպէս նաեւ ժողովուրդներու մօտ խղճի եւ մտքի ազատութեան պահանջքը, միշտ յօդուած խաղաղութեան կապով: Առ այդ, կողմեր համաձայնեցան միասնական աշխատանքի, նպաստելով՝ Սուրիոյ խաղաղութեան, վերադարձնելով անոր եղբայրսիրութեան ու ներողամտութեան հոգին:



